*ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*Խ-326-25.10.2019-ԱՍ-011/0*

*ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.***

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասն առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ.

~~«Եթե կենսաթոշակառուն ունի տեղաշարժման խնդիր, Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը կենսաթոշակառուի ցանկությամբ կարող է հաստատվել բանկի կողմից՝ հեռահար եղանակով (առանց բանկ ներկայանալու)՝ Կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»:~~

«Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը բանկի կողմից՝ կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով:»:

***Հոդված 2.***

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 3 ամիս անց:~~

~~2. Սույն օրենքի հրապարակմանը հաջորդող 3 օրացուցային ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում եւ իրականացնում է համապատասխան փոփոխություններ՝ սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործընթացն ապահովելու նպատակով:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 3 ամիս հետո:

2. Սույն օրենքի հրապարակումից հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է համապատասխան իրավական ակտը: